# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 փետրվարի 2023 թվականի N 378

## ԳՈՌ ՍԵՐԳԵՅԻ ՄԱՑԱԿՅԱՆԻ ՀԵՏ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության նախարարի տեղակալ Նարեկ Մանուկյանի 16.02.2023 թվականի թիվ ՆՄ/15.4/4755-2023 գրությունը, Գոռ Մացակյանի դիմումը և ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2006թ. հուլիսի 13-ի թիվ 1002-Ն որոշմամբ՝ որոշում եմ.

1.Գոռ Սերգեյի Մացակյանին ընդունել աշխատանքի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի առաջատար մասնագետ- աուդիտորի ժամանակավոր թափուր պաշտոնում /ծածկագիր՝ 3.1-50/, կնքելով ժամկետային աշխատանքային պայմանագիր, մինչև մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի որոշվելը:

2. Աշխատավարձը՝ համաձայն պաշտոնային դրույքաչափի:

3. Ծառայողական պարտականությունների սկիզբ սահմանել 2023 թվականի փետրվարի 21-ը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. փետրվարի 21
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 փետրվարի 2023 թվականի N 379

## ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐ ԱՆԱՀԻՏ ՕՆԻԿ ՄԻՐԱՔՅԱՆԻՆ ԵՎ ԳԱԳԻԿ ՕՆԻԿ ՄԻՐԱՔՅԱՆԻՆ՝ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՑԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ, ՍԿԶԲՆԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձորի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից 2023 թվականի փետրվարի 14-ին տրված դրական եզրակացությունը (արձանագրություն թիվ 2, կետ 1) անչափահասներ Անահիտ Օնիկ Միրաքյանին և Գագիկ Օնիկ Միրաքյանին սկզբանական հաշվառման վերցնելու մասին, հաշվի առնելով, որ նրանց հայրը՝ Օնիկ Գագիկի Միրաքյանը, կալանավորված է և գտնվում է ՀՀ ԱՆ «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում, իսկ մայրը՝ Ցոլինե Դերենիկի Մազմանյանը, մահացել է 25.12.2022 թ., ղեկավարվելով ՀՀ կառավարության 06 հուլիսի 2006 թվականի թիվ 968-Ն որոշումով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի Ֆիդայիների փողոցի թիվ 7 տան անչափահաս բնակիչներ՝ Անահիտ Օնիկ Միրաքյանին (ծնված՝ 17.10.2011թ., ծննդյան վկայական՝ ԱԲ 136705, տրված՝ 19.10.2011թ., ՔԿԱԳ Վանաձորի տ/բ-ի կողմից) և Գագիկ Օնիկ Միրաքյանին (ծնված՝ 06.10.2014թ., ծննդյան վկայական՝ ԱԲ 343538, տրված՝ 08.10.2014թ., Վանաձոր ՔԿԱԳ տարածքային բաժնի կողմից)՝ որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխաների, վերցնել սկզբնական հաշվառման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. փետրվարի 21
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 փետրվարի 2023 թվականի N 380

### ԱՐԱՐԱՏ ԼՅՈՎԱՅԻ ԱԹՈՅԱՆԻՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հավելվածի 2.5 կետը, Վանաձոր համայնքի ավագանու 14 դեկտեմբերի 2022 թվականի թիվ 7 որոշումը, Արարատ Աթոյանի դիմումը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Արարատ Լյովայի Աթոյանին նշանակել Վանաձոր համայնքի Շահումյան բնակավայրի վարչական ղեկավարի պաշտոնում:

2. Արարատ Աթոյանի լիազորությունների կատարման սկիզբ սահմանել 2023 թվականի փետրվարի 22-ը:

3. Աշխատավարձը՝ համաձայն հաստիքացուցակի:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. փետրվարի 21
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 փետրվարի 2023 թվականի  N 381

### «ԳԼՈՐԻԱ ՎԱՆԱՁՈՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՖԻՐՄԱՅԻՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գլորիա Վանաձոր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Քրիստինա Բագրատիոնի Դարբինյանի 20.02.2023 թվականի թիվ 01/2648 հայտը, 20.02.2023 թվականի հավաստագիրը, թիվ 311 վճարման անդորրագիրը, ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, 11-րդ հոդվածի 5-րդ մասով, 12-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N 1617-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ կետով, Վանաձոր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 8-Ն որոշման թիվ 1 հավելվածի 15) կետով՝ ***որոշում եմ.***

Թույլատրել «Գլորիա Վանաձոր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը իր ֆիրմային անվանման մեջ օգտագործել «Վանաձոր» բառը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. փետրվարի 21
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 փետրվարի 2023 թվականի N 382

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԳՅՈՒՂ ՇԱՀՈՒՄՅԱՆ 2 ՇԵՆՔ 45 ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Քրիստինե Սամվելի Կարապետյանի, Արտյոմ Աշոտի Չավուշյանի և Արգիշտի Արտյոմի Կարապետյանի, Ադրինե Արտյոմի Կարապետյանի օրինական ներկայացուցիչ Քրիստինե Սամվելի Կարապետյանի 09.01.2023 թվականի թիվ 235 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 27122022-06-0002 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը/71806/, անշարժ գույքի՝ բնակարանի առուվաճառքի թիվ 8081 պայմանագիրը /նոտարական կոդ: 594-20221229-2-6570259/ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ որոշում եմ.

Վանաձոր քաղաքի գյուղ Շահումյան 2 շենք 45 բնակարանին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր ք., գյուղ Շահումյան, 1-ին փողոց, 57 շենք, 45 բնակարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ                Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. փետրվարի 22
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 փետրվարի 2023 թվականի Ν 383

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՓՈՂՈՑ ՏՈՒՆ 4 ԹԻՎ 8 ԲՆԱԿԱՐԱՆ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՆԱՀԻՏ ՍՏՅՈՊԱՅԻ ՄԱԹՈՍՅԱՆԻՆ ԵՎ ԷԴՄՈՆ ՌՈՒՍԼԱՆԻ ՍԱՔԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՁԵՎԱՓՈԽՈՒՄՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անահիտ Ստյոպայի Մաթոսյանի և Էդմոն Ռուսլանի Սաքանյանի դիմումը, 25.07.1996թ. սեփականության վկայագիրը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված շինությունների հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ, 27-րդ, 31-րդ կետերով և 32-րդ կետի բ) ենթակետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել օրինական Անահիտ Ստյոպայի Մաթոսյանին և Էդմոն Ռուսլանի Սաքանյանին սեփականության իրավունքով պատկանող, այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող, Վանաձոր համայնքի Իսահակյան փողոց տուն 4 թիվ 8 բնակարան հասցեում գտնվող բնակարանում իրականացված թվով 3 ինքնակամ ձևափոխումները:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված թվով 3 ինքնակամ ձևափոխումների օրինականացման համար սահմանված վճարը՝ 5910 (հինգ հազար ինը հարյուր տասը) ՀՀ դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

3. Վանաձոր համայնքի Իսահակյան փողոց տուն 4 թիվ 8 բնակարանին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Ա. Իսահակյան փողոց, 8 շենք, 4 բնակարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. փետրվարի 22
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 փետրվարի 2023 թվականի N 384

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԳՅՈՒՂ ԳՈՒԳԱՐՔ 7 ՇԵՆՔ, 15 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայկ Սարգսի Պողոսյանի 02.02.2023 թվականի թիվ 1745 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 02092022-06-0052 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը /75819/, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի գյուղ Գուգարք 7 շենք, 15 հասցեում գտնվող բնակարան տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր, գյուղ Գուգարք, Էներգետիկների 5-րդ փողոց, 7 շենք, 15 բնակարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. փետրվարի 22
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 փետրվարի 2023 թվականի N 385

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԳՅՈՒՂ ԴԱՐՊԱՍ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏՆԱՄԵՐՁԻՆ
ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Դոնարա Ղևոնդի Սիրադեղյանի 25.01.2023թվականի թիվ 1139 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2056435 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը /74888/, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի գյուղ Դարպաս հասցեում գտնվող տնամերձին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր, գյուղ Դարպաս, 7-րդ փողոց, 6-րդ փակուղի, 1/1 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. փետրվարի 22
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 փետրվարի 2023 թվականի N 386

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՄՈՍԿՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 50Բ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԵՆՅԱԿԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռիտա Միխայիլի Նալբանդյանի 22.12.2022 թվականի թիվ 17852 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 675073 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը/73367/, 16.12.2022 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 7835 վկայագիրը /նոտարական կոդ: 594-20221216-84-6537447/ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Մոսկովյան փողոցի թիվ 50բ հասցեում գտնվող ավտոտնակին և տնտեսական սենյակին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Մոսկովյան փողոց, 50/5 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. փետրվարի 22
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 փետրվարի 2023 թվականի N 387

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԴՊՐՈՑԻ ՓՈՂՈՑ 9 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անուշ Սուրենի Հովհաննիսյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 04012022-06-0010 վկայականները, «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, եզրակացությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի առանձին որակական քանակական բնութագրերի և դրա նկատմամբ առանձին իրավունքների (սահմանափակումների) վերաբերյալ 04.01.2022թ. տրված թիվ ԱՏ-04012022-06-0064 տեղեկանքը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698 որոշումով՝ որոշում եմ.

1. Հաստատել Վանաձոր քաղաքի Դպրոցի փողոց 9 հասցեում գտնվող բնակելի տան զբաղեցրած 0,02415հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. փետրվարի 22
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 փետրվարի 2023 թվականի N 388

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 09 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 277 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արթուր Աբրահամյանի դիմումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 09 սեպտեմբերի 2021 թվականի թիվ 277 շինարարության թույլտվությունը և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 09 սեպտեմբերի 2021 թվականի թիվ 277 շինարարության թույլտվության մեջ «140,0» թվերը փոխարինել «201,0» թվերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. փետրվարի 22
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 փետրվարի 2023 թվականի N 389

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 03.08.2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ CPP0-0000-2230 ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ) ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ստեփան Ստեփանյանի, ով հանդիսանում է Հենրիկ Ստեփանի Ստեփանյանի լիազորված անձը, 30.08.2022 թ. թիվ 02/10280 դիմումը,28.07.2021 թվականի թիվ 2398 լիազորագիրը( նոտարական ակտի կոդ: 843-20210728-90-5270768), ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1.Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 03.08.2022թ. թիվ CPPO-0000-2230 նախագծման թույլտվությունը (ճարտարապետահատակագծային առաջադրանք):

2.Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, տեղեկատվության և աշխատանքի բաժնին՝ որոշման մեկ օրինակն ուղարկել հողամասի սեփականատիրոջը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. փետրվարի 22
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 փետրվարի 2023 թվականի N 390

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Տ. ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ ՇԵՆՔ 40 ԹԻՎ 1 ԵՎ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ 40 ՇԵՆՔ 2 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՇՈՏ ՍԱՇԱՅԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԽԱՆՈՒԹՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՄԵԿ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Աշոտ Սաշայի Գևորգյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 09102012-06-0090 և 29122021-06-0043 վկայականները, Վանաձոր քաղաքային համայնքի ղեկավարի 08 նոյեմբերի 2012 թվականի թիվ 1210-Ա և Վանաձոր համայնքի ղեկավարի 02 փետրվարի 2023 թվականի թիվ 196 որոշումները, 10.02.2023թ. տրված թիվ 8 ավարտական ակտը (շահագործման թույլտվություն), ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Միավորել Վանաձոր քաղաքի Տ. Մեծի պողոտա թիվ շենք 40 թիվ 1 և Տիգրան Մեծի պողոտա թիվ 40 շենք թիվ 2 հասցեներում գտնվող, Աշոտ Սաշայի Գևորգյանին սեփականության իրավունքով պատկանող 164.0քմ ընդհանուր մակերեսով խանութները՝ համաձայն ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված շինությունների հատակագծի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր քաղաք, Տիգրան Մեծի պողոտա, 40 շենք, 1, 2 խանութ:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ ЛОРИЙСКАЯ ОБЛАСТЬ МУНИЦИПАЛИТЕТ ВАНАДЗОР RA LORI REGION VANADZOR MUNICIPALITY *06967534*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ　　　　Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. փետրվարի 22
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 փետրվարի 2023 թվականի N 391

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի «ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 71 ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով հաստատված եռամսյակային բաշխումները և հաշվի առնելով գնումների պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գնման առարկաների բնութագրերի նախագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2017թ. ապրիլի 13-ի «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին» թիվ 390-Ն որոշմամբ հաստատված թիվ 3 հավելվածով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր համայնքի ղեկավարի 2023 թվականի հունվարի 18-ի «Վանաձոր համայնքի 2023 թվականի գնումները հաստատելու մասին» թիվ 71 որոշման հավելվածում կատարել լրացում՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. փետրվարի 22
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 փետրվարի 2023 թվականի N 392

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 06 ՕԳՈՍՏՈՍԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1659 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ալվինա Սուրենի Բոզինյանի դիմումը,ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 14.10.2021թ. տրված գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը մերժելու մասին թիվ Մ-14102021-06-0005 որոշումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 06 օգոստոսի 2021 թվականի թիվ 1659 որոշումը, «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների նոր հատակագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 06 օգոստոսի 2021 թվականի «Վանաձոր քաղաքի Տավրոս (նախկին Ժդանով թաղ.) II-րդ փող. թիվ 15 հասցեի բնակելի տանը կից հողամասի և շինությունների նկատմամբ Ալվինա Սուրենի Բոզինյանի սեփականության իրավունքը ճանաչելու և նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 1659 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Որոշման նախաբանում և 1-ին կետում «124.8քմ» բառերը փոխարինել «121.1քմ» բառերով:

2. Որոշման նախաբանում և 2-րդ կետում «315.8քմ» բառերը փոխարինել «312.1քմ» բառերով:

3. Վանաձոր համայնքի ղեկավարի 06 օգոստոսի 2021 թվականի թիվ 1659 որոշման հատակագիծը փոխարինել համայնքի ղեկավարի կողմից հաստատված նոր հատակագծով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. փետրվարի 23
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 փետրվարի 2023 թվականի N 393

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 3/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԼԱԴԻՄԻՐ ՋԱՎԵՆԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վլադիմիր Ջավենի Սահակյանի 30.09.2022 թվականի թիվ 12089 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 09022023-06-0042 վկայականը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 48$^{1}$-րդ հոդվածով և 76-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2-րդ կետի ա) ենթակետով, ՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Գործարանային փողոց 3/1 հասցեում գտնվող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին դասվող համայնքային սեփականություն հանդիսացող 19.8քմ մակերեսով հողամասը, համաձայն Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 09022023-06-0042 վկայականի, կառուցապատման իրավունքով, 10 տարի ժամկետով տրամադրել Վլադիմիր Ջավենի Սահակյանին՝զրուցարան կառուցելու նպատակով:

2. Վանաձորի համայնքի ղեկավարին՝Վլադիմիր Ջավենի Սահակյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 19.8քմ հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագիր, 1.0քմ մակերեսով հողամասի համար ամսական վճարը սահմանելով 12 (տասներկու) ՀՀ դրամ, իսկ աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ЛОРИЙСКАЯ ОБЛАСТЬ МУНИЦИПАЛИТЕТ ВАНАДЗОР
RA LORI REGION VANADZOR MUNICIPALITY
*06967534*

2023թ. փետրվարի 23
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 փետրվարի 2023 թվականի  N 394

### ՀԱՅԿԱՆՈՒՇ ԱԶԱՏԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒԳԱՐՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հավելվածի 2.5 կետը, Վանաձոր համայնքի ավագանու 14 դեկտեմբերի 2022 թվականի թիվ 7 որոշումը, Հայկանուշ Սարգսյանի դիմումը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Հայկանուշ Ազատի Սարգսյանին նշանակել Վանաձոր համայնքի Գուգարք բնակավայրի վարչական ղեկավարի պաշտոնում:

2. Հայկանուշ Սարգսյանի լիազորությունների կատարման սկիզբ սահմանել 2023 թվականի փետրվարի 24-ը:

3. Աշխատավարձը՝ համաձայն հաստիքացուցակի:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ                    Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. փետրվարի 23
ք.Վանաձոր